ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **09/հունվարի/2025 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ....12.... անդամներ:

Բացակա էին՝ ....Արսեն Ավետիսյանը և....

....Գրիգոր Բաբայանը....:

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u> համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, համայնքապետարանի Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը

<u>Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար՝ Վահագն Արսենյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը</u>

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 9-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը՝

1.1. Ջերմուկ համայնքի բյուջեի միջոցների 2025 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. «ՎԱՅՔԻ ՃՇՇ» փակ բաժնետիրական ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----12---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 1-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան

1. Ջերմուկ համայնքի բյուջեի վարչական մասի 2025 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի 84,121,615.9 (ութսունչորս միլիոն հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր տասնհինգ դրամ, 90 լումա) գումարն ուղղել նախորդ բյուջետային տարում բյուջեի վարչական մասի ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա՝ էներգետիկ, կապի, կոմունալ, մասնագիտական և հարկային պարտավորությունների մարմանը, ապրանքանյութական արժեքների, պաշարների ձեռք բերմանը, իսկ ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 20,834,909.2 (քսան միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր ինը դրամ 20 լումա) գումարն ուղղել կապիտալ ծախսերի (սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում որպես համայնքի ներդրում) համաֆինանսավորմանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----11---- Դեմ----0---- Ձեռնպահ----0----

Չի քվեարկել՝ Լ. Հովհաննիսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 2-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 80-Ն որոշման 2-րդ կետը և 2025 թվականի հունվարի 9-ի «Ջերմուկ համայնքի բյուջեի միջոցների 2025 թվականի տարեսկզբի ազատ մնացորդի օգտագործման մասին» N 2-Ա որոշումը՝

1. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային մասի «38-01-00-պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ» գործառնական նշանակության «0069-Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբվենցիաներ» գործառնական նշանակության տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 107,515,700 (մեկ հարյուր յոթ հազար հինգ հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամով, «29-50-00-հողի օտարումից մուտքեր» գործառնական նշանակության «0058-հիմնական միջոցների օտարումից մուտքեր» տնտեսագիտական հոդվածը՝ 46,862,400 (քառասունվեց միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար երեք հարյուր իննսունինը դրամ 20 լումա) ՀՀ դրամով, «37-09-00- պետական բյուջեից տրամադրված այլ ընթացիկ դրամաշնորհ» գործառնական նշանակության համապատասխան տնտեսագիտական հոդվածը ավելացնել 16,886,310 (տասնվեց միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար երեք հարյուր տաս) ՀՀ դրամով, «46-08-00-ճոպանուղու ծառայություններից եկամուտ» տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամով:

2. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսային մասի գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշիվներում կատարել հետևյալ փոփոխություններն ու ներքին վերաբաշխումները՝

2.1 Բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002-«համայնքապետարանի պահպանման ծախսեր» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5121-այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 85,000,000 (ութսունհինգ միլիոն) ՀՀ դրամով,

2.2 Բաժին 04, խումբ 05, դաս 01, ծրագիր 51, 210002- «ասֆալտբետոնյա ծածկի հիմնանորոգում և ընթացիկ սպասարկում» գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 74,954,800 (յոթանասունչորս միլիոն ինը հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամով, «4637- ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 4,088,068 (չորս միլիոն ութսունութ հազար վաթսունութ) ՀՀ դրամով,

2.3 Բաժին 04, խումբ 05, դաս 05, ծրագիր 53, 210002- «ճոպանուղու հիմնանորոգում » գործառնական նշանակության ծախսերի կատարման նախահաշվի «5113- շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 42,500,000 (քառասուներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով,

2.4 Բաժին 04, խումբ 07, դաս 03, ծրագիր 51, 210002 - «զբոսաշրջություն» գործառնական նշանակության «4637-ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 2,655,000 (երկու միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամով,

2.5 Բաժին 05, խումբ 01, դաս 01, ծրագիր 51,210002- «աղբահանություն» գործառնական նշանակության «4637- ընթացիկ դրամաշնորհներ» և «4657- կապիտալ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար պակասեցնել 8,488,082 (ութ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար ութսուներկու) և 441,658 (չորս հարյուր քառասունմեկ հազար վեց հարյուր հիսունութ) ՀՀ դրամներով,

2.6 Բաժին 05, խումբ 02, դաս 01, ծրագիր 51,210002- «կեղտաջրերի հեռացում» գործառնական նշանակության «4637-ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 470,398.0 (չորս հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր իննսունութ) ՀՀ դրամով,

2.7 Բաժին 05, խումբ 06, դաս 01, ծրագիր 51, 210002- «կանաչ տարածքների պահպանում» գործառնական նշանակության «4637-ընթացիկ դրամաշնորհներ» և «4657-կապիտալ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար ավելացնել 673,456.0 (վեց հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր հիսունվեց) և 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամներով՝ պակասեցնելով «5131-աճեցվող ակտիվներ» տնտեսագիտական հոդվածը 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամով,

2.8 Բաժին 06, խումբ 01, դաս 01, ծրագիր 51,210002- «բնակարանային շինարարություն» գործառնական նշանակության «4637-ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 3,867,181 (երեք միլիոն ութ հարյուր վաթսունյոթ հազար հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամով,

2.9 Բաժին 06, խումբ 04, դաս 01, ծրագիր 51,210002 - «փողոցների լուսավորում» գործառնական նշանակության «4637-ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 90,000.0 (իննսուն հազար) ՀՀ դրամով,

2.10 Բաժին 06, խումբ 02, դաս 01, ծրագիր 51,210002 - «համայնքի զարգացում» գործառնական նշանակության «5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 20,834,910 (քսան միլիոն ութ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր տաս) ՀՀ դրամով,

2.11 Բաժին 06, խումբ 03, դաս 01, ծրագիր 51, 210002- «ջրամատակարարում» գործառնական նշանակության «5113-շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» և «5112- շենքերի և շինությունների կառուցում» տնտեսագիտական հոդվածները համապատասխանաբար պակասեցնել 14,881,000 (տասնչորս միլիոն ութ հարյուր ութսունմեկ հազար) և 104,000,000 (մեկ հարյուր չորս միլիոն) ՀՀ դրամներով,

2.12 Բաժին 08, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002- «սպորտային միջոցառումներ» գործառնական նշանակության «5113- շենքերի և շինությունների կառուցում»

տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով,

2.13 Բաժին 08, խումբ 06, դաս 01, ծրագիր 51, 210002- «հանգիստ, մշակույթ» գործառնական դասակարգման «5132- ոչ նյութական հիմնական միջոցներ» տնտեսագիտական հոդվածը պակասացնել 542,300 (հինգ հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամով,

2.14 Բաժին 09, խումբ 01, դաս 01, ծրագիր 51, 210002- «նախադպրոցական կրթություն» գործառնական նշանակության «4637-ընթացիկ դրամաշնորհներ» գործառնական նշանակության տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 811,690.0 (ութ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր իննսունուն) ՀՀ դրամով,

2.15 Բաժին 09, խումբ 02, դաս 02, ծրագիր 51, 210002- «միջնակարգ ընդհանուր կրթություն» գործառնական նշանակության «4637- ընթացիկ դրամաշնորհներ», տնտեսագիտական հոդվածը ավելացնել 1,898,400 (մեկ միլիոն ութ հարյուր իննսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամով,

2.16 Բաժին 09, խումբ 05, դաս 01, ծրագիր 51,210002- «արտադպրոցական դաստիարակություն» գործառնական նշանակության «4637-ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 4,074,449.0 (չորս միլիոն յոթանասունչորս հազար չորս հարյուր քառասունինը) ՀՀ դրամով,

2.17 Բաժին 11, խումբ 01, դաս 02, ծրագիր 51, 210002- «պահուստային ֆոնդի» գործառնական նշանակության «4891-պահուստային միջոցներ» տնտեսագիտական հոդվածը ավելացնել 94,846,771.0 (իննսունչորս միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար յոթ հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամով:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ սույն որոշման հավելվածին համապատասխան ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեն՝ 2025 թվականի հունվարի 9-ի դրությամբ՝

Ընդամենը՝ եկամուտների գծով- 938,624,9 հազար ՀՀ դրամ

ծախսերի գծով- 938,624.9 հազար ՀՀ դրամ

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------11---------- *Դեմ*----------1---------- *Ձեռնպահ*----------0----------

Ա. Հովսեփյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 3-Ն/

Լսեցին

«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, ՀՀ Հողային օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-ին մասի, հաշվի առնելով 2024 թվականի դեկտեմբերի 25-ին կայացած հանրային քննարկման արդյունքները՝

1. Տալ նախնական համաձայնություն «ՎԱՅՔԻ ՃՇՇ» փակ բաժնետիրական ընկերությանը ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքում գտնվող Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------12---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 4-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	

Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝

Վահագն Արսենյան _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____